



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան և Արովյան համայնքների մի խումբ բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Արթուր Խաչյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, Սամվել Հակոբյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ, Գոհար Պողոսյանին 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ, Հասմիկ Գալստանյանին 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ և Աիդա Ալեքսանյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

2019 թվականի մայիսի 23
ք. Հրազդան
N 112-Ա



Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2019 թվականի մայիսի 23-ի N 112-Ա որոշման



Գրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Արթուր Խաչյան	ք. Հրազդան, Վանատուր, 530 բնակարան	50 000	
2	Սամվել Հակոբյան	ք. Հրազդան, Միկրոշրջան, 42 շենք, 36 բնակարան	20 000	
3	Գոհար Պողոսյան	ք. Աբովյան, 3 Միկրոշրջան, 17 շենք, 67 բնակարան	25 000	
4	Հասմիկ Գալստանյան	ք. Հրազդան, Կենտրոն, 80 շենք, 24 բնակարան	10 000	
5	Աիդա Ալեքսանյան	ք. Աբովյան, Պիոներական փողոց, 1 շենք, 13 բնակարան	50 000	